

**ՓՈՒՍԱԿԵՐՊՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՆՃԼԻԿՏՆԵՐԻ ՍՈՑԻՈՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՐՁ**

**Ն. Ժ. ՄԿՐՏՉԵԱՆ**

Անցումային հասարակությունների համակարգային վերլուծություններում, ուր ավելի հաճախ ընդգծվում են արմատական հիմնախնդիրների (ժողովրդավարացում, շուկայական տնտեսության ձևավորում և այլն) լուծման հնարավորություններն ու միտումները, տնտեսական ոլորտը անխտիր մասն կարգի ուսումնասիրությունների առարկա է: Սա միանգամայն օրինաչափ է, քանզի առանց նյութական միջոցների արտադրության ու վերարտադրության, բաշխման ու փոխանակման անհնար է պատկերացնել սոցիալական համակարգերի գոյությունն ու գործառնությունը: Հետևաբար տնտեսական ոլորտի ուսումնասիրությունը առավել քան կարևոր է փոխակերպական գործընթացների «հորձանուտում» հայտնված սոցիալական համակարգերի «ինքնազգացողությունը» ճիշտ բնութագրելու համար: Տնտեսական ոլորտում ծավալվող գործընթացների ու սոցիալական փոխազդեցությունների բազմազանության համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունեն կոնֆլիկտների լինելիության ու ծավալման, դրանք հարուցող գործոնների ու շարժառիթների հիմնահարցերը:

Քանի որ տնտեսական կոնֆլիկտները ծավալվում են ռեսուրսների բաշխման ու վերահսկման պատճառով, երբ գործունեության ձևերի, հասարակական հարաբերությունների ու արժեքների միջև առկա սոցիալական հակասությունները մաս վերաճում են բախումների, ուստի կարելի է ասել, որ դրանք մարդկային ցանկացած հանրույթի կենսագործունեության անխուսափելի ուղեկիցներ են: Ընդ որում, դրանց առանձնահատկությունները կախված են տվյալ հասարակական համակարգի գործառության առանձնահատկություններից և արտահայտում են վերջիններիս բնորոշ գծերը:

Հարկ է նկատել, սակայն, որ տնտեսական կոնֆլիկտների ծավալման դրդապատճառները կարող են լինել բազմազան՝ կենսական պայմանների և նյութական բարեկեցության ապահովում, ընչաքաղցություն, սոցիալական դիրքի բարելավում, հեղինակության ձեռքբերում և այլն: Հիշյալ դրդապատճառների շարքում առանձնահատուկ տեղ ու դեր ունեն հատկապես կոնֆլիկտների սոցիոմշակութային շարժառիթները, որոնք տեսական ու գործնական նոր հնչեղություն են ձեռք բերում նախկին որակական որոշակիությունը կորցրած ու նորի ձգտող և այդ նպատակով փոխակերպական գործընթացներում հայտնված հասարակական համակարգերի պարագայում: Հիմնահարցի լուսաբանումն ուշագրավ է հատկապես հետխորհրդային երկրների օրինակով, որտեղ մինչփոխակերպական շրջանի տնտեսական համակարգի բաղադրատարրերն ու նրանցով պայմանավորված՝ կյանքի կանոնակարգման մշակույթի առանձնահատկությունները հիմնովին վերափոխվելու միտվածությամբ հայտնվում են սոցիոմշակութային նոր սկզբունքներով հասարակության տնտեսական կյանքը կառուցելու ու կազմակերպելու դժվարությունների առջև: Բացահայտելու համար, թե ի վերջո, ի թիվս այլ դրդապատճառների, որքանով է նշանակալի սոցիոմշակութային գոր-

ծոնների դերը տնտեսական կոնֆլիկտների ծագման հարցում, թերևս անհրաժեշտ է գտնել այդ երկու, միմյանցից տարբեր մոդելների բնորոշ գծերը: Հետաքրքիրն այն է, որ երկուսն էլ արևմտաեվրոպական քաղաքակրթության ծնունդ են, որոնց գլխավոր նպատակը նախապես համընդհանուր բարօրության ու բարեկեցության հաստատումն էր: Այլ բան է, որ զանազան սոցիալական, քաղաքական ու հոգևոր իրողությունների համատեքստում կոնկրետ կիրարկման արդյունքում դրանք այլակերպվեցին ու դրսևորեցին միանգամայն նոր հատկանիշներ:

Այդ մոդելներից առաջինը առնչակից է մարքայան քաղաքատնտեսությանը, որին բնորոշ են հասարակության մեջ տնտեսական կյանքի գերակայության և դրա՝ իշխանական հարաբերություններով կառուցված ու կազմակերպված լինելու գաղափարները: Վեր հանելով իրենց ժամանակի տնտեսության սայթաքումներն ու լուրջ թերությունները՝ քաղաքատնտեսության տեսաբանները համոզված էին, որ շուկայական տնտեսության գաղափարները պատրանքային են: Նրանց կարծիքով, կապիտալիստական հարաբերությունների ֆետևանքով շահագործող ու շահագործվող սոցիալական դասակարգերի հակասությունները, որոնց հիմքում ընկած էին իշխող դասակարգի տնտեսական շահերը, կարող են հաղթահարվել միայն սոցիալիզմի պայմաններում՝ դասակարգերի վերացման, սեփականության ձևերի փոփոխման, արտադրության միջոցների ու բարիքների հավասար բաշխման սկզբունքի կիրառմամբ: Տասնամյակներ շարունակ այս գաղափարներով ղեկավարվող նախկին խորհրդային երկրներում ձևավորվել ու հաստատվել էր յուրահատուկ տնտեսական մշակույթ, տնտեսական համակարգ, որը փորձում էր խուսափել տնտեսական ազատականության որևէ գաղափարի իրականացումից: Պլանային, վարչահրամայական անվանված տնտեսական այս համակարգը խարխալում է երկու սկզբունքի վրա.

*1. Այդպիսի հավասարության, ըստ որի Այդպիսի բարիքներն ու եկամուտները հասարակության բոլոր անդամների միջև պետք է բաշխել հավասարապես,*

*2. պետական կառավարման, ըստ որի բաշխման սոցիալիստական սկզբունքը պահպանելու համար հասարակության սոցիալ-տնտեսական կյանքը պետք է կառավարվի քաղաքական իշխանության կողմից:*

Նշյալ սկզբունքներից էր բխում տնտեսության և ողջ հասարակության նկատմամբ պետության որդեգրած ամբողջատիրական մոտեցումը, ըստ որի՝ պետությունը մի կողմից կենտրոնացնում է բոլոր տնտեսական լծակները, մյուս կողմից, անկախ ոլորտի արդյունավետության աստիճանից, որոշակի սոցիալական երաշխիքների միջոցով փորձում է քաղաքացիների համար ապահովել կենսագոյության անհրաժեշտ նվազագույն պայմաններ: Նման տնտեսական համակարգերում սոցիալական ռիսկը գրեթե անհնար է դառնում, իսկ շարքային քաղաքացիները վերածվում են պասիվ, ոչ նախաձեռնող տնտեսական գործիչների՝ Տնտեսական այս մշակույթը, որը խնամակալական հարաբերություններ է հաստատում պետության և քաղաքացու միջև, մարդկանց զրկում է նախաձեռնողականությունից՝ սոցիալ-հոգեբանական նորարարական ակտիվ կենսադիրորոշումներից ու շարժառիթներից: Ի դեմս պետության՝ քաղաքացին վստահ է, որ ինչ-որ հոգր, իրենից դուրս գտնվող կառույց պարտավոր է և պետք է հոգա, ապահովի իր կենսագոյության նվազագույն, հատկապես Այդպիսի պայմանները: Սոցիալական նվազագույն երաշխիքներով սահմանափակված և նվազագույն ինքնաբավությամբ ապրող խորհրդային քաղաքացին զրկված էր տնտեսական ու քաղաքական ազատություններից ու ինքնագործունեության հնարավորություններից:

<sup>1</sup> Տե՛ս **А. Н. Данилов, Переходное общество, Минск, 1998, էջ 163:**

Վարչաճարմայական տնտեսաճարմակարգի կառավարչական առանձնա-  
հատկությունները անհատին հնարավորություն չէին տալիս ներառվելու սոցիա-  
լական համակարգի համար այնքան կարևոր ոլորտի՝ տնտեսականի կառավար-  
ման գործընթացների մեջ՝ նպաստելով համապատասխան սոցիալական որակ-  
ների ձևավորմանը: Այս մշակույթը առաջնայությունը տալիս է հենց ամբողջին,  
նրա միասնությանը, կայունությանն ու ամրությանը՝ վերջինիս ապահովման հա-  
մար կիրառելով առավելապես գաղափարական-քաղաքական միջոցներ: Ան-  
հատն այստեղ ընդամենը ամբողջի մի մասնիկն է, տարրը, որի շահերը, նպա-  
տակները, ձգտումներն ու արժեքները պետք է ծառայեն կամ գոնե ներդաշնակեն  
այդ կառույցի շահերին, նպատակներին ու արժեքներին:

Իր ակնհայտ թերություններով հանդերձ՝ այս համակարգը ժամանակի մար-  
տահրավերներին կարողացավ հակադրել իր աննախադեպ համերաշխությունն  
ու միասնականությունը: Սակայն, միաժամանակ, իր «կոշտ» սոցիալ-կառուցված-  
քային հատկությունների պատճառով այն կտրականապես դեմ էր արտահայտ-  
վում սոցիալական լարվածության, հակասության, կոնֆլիկտի ցանկացած  
դրսևորման: Սոցիալական հավասարության կարգախոսով զինված խորհրդային  
հանրապետություններում, որտեղ հիմնական ռեսուրսները պետական էին, տըն-  
տեսական կոնֆլիկտների համար օրինական հիմքերը խիստ սահմանափակ էին:  
Դրանք կարող էին ծավալվել միայն սեփականության ու նրա զանազան ձևերի  
նկատմամբ մասնավոր կիրառման հետևանքով, ինչը, բնականաբար, պիտի  
դուրս գար օրինականության ու իրավականության սահմաններից՝ կրելով ընդգրծ-  
ված ապագործառական բնույթ: Նման կարգի տնտեսական կոնֆլիկտները մե-  
խանիկորեն դասվում էին պետական կամ իրավական հանցագործությունների  
շարքին ու կարգավորվում համապատասխան ուժային միջոցներով<sup>2</sup>: Տնտեսա-  
կան ոլորտում մեծ կարգի իրողությունների երևան գալը ակնհայտորեն կբացա-  
հայտեր որդեգրված տնտեսական քաղաքականության ու տնտեսաճարմակարգի  
թերարժեքությունը: Հետևաբար, ինչպես և քաղաքական ոլորտում, տնտեսական  
կոնֆլիկտները, անկախ այն բանից՝ ունեին սոցիալական երանգավորում, թե  
պարզապես «համեղ պատառի» համար մղվող պայքար էին, ճնշվում էին, դառ-  
նում ստվերային ու գաղտնի: Նման տնտեսաճարմակարգի պարագայում կոնֆ-  
լիկտների ռացիոնալացման ու օրինական կարգավորման մասին խոսք անգամ  
լինել չէր կարող:

Այսպիսի հիմնային բնութագրիչներով օժտված նախկին խորհրդային տա-  
րածքը մուտք գործեց այսպես կոչված շուկայական տնտեսության ձևավորման ու  
կառուցման շրջափուլ՝ բնականաբար ժառանգելով հարաբերությունների կա-  
ռուցման, արժեքային կողմնորոշումների ու մոտեցումների նախկին մեխանիզմ-  
ներն ու ձևերը, ինչպես նաև նախկին համակարգի հիմնախնդիրները: Ըստ էու-  
թյան վերջին հանգամանքը նպաստեց, որպեսզի փոխակերպումների սոցիալա-  
կան գինը մի շարք հետխորհրդային երկրների համար սպասվածից ավելի թանկ  
լինի:

Շուկայական տնտեսության անցնելու խորհրդային երկրների ցանկությու-  
նը, ինչպես վերը նշվեց, առաջին հերթին պայմանավորված էր հատկապես պլա-  
նային տնտեսության անարդյունավետությամբ: Արևմտյան Եվրոպայի և Հյուսիս-  
սիային Ամերիկայի երկրների տնտեսական համակարգերի աննախադեպ հաջո-  
ղությունները՝ արդյունավետությունը, վերափոխվելու, արդիականանալու ունա-  
կությունը և մարդկային ամենատարբեր հանրույթների պատշաճ սոցիալական

<sup>2</sup> Տե՛ս **Օ. Ա. Алексеев**, Экономические конфликты в условиях трансформации общественной системы, в кн.: «Современная конфликтология в контексте культуры мира: Материалы 1-го Международного конгресса конфликтологов», под ред. Е. И. Степанова, М., 2001, էջ 275:

ապահովվածությունն ըստ տնտեսության մեջ իրենց ունեցած ներդրման աստի-  
ճանի, այն ակնառու օրինակներն էին, որոնք անխուսափելի դարձրին խորհրդա-  
յին համակարգում այլընտրանքային տնտեսական համակարգի փնտրտուքը:  
Սակայն այդ ուղու որդեգրման ժամանակ հետխորհրդային երկրները անուշադ-  
րության մատնեցին ազատական տնտեսական համակարգի արդյունավետ գոր-  
ծառության համար անհրաժեշտ՝ իրենց երկրների մշակութային առանձնահատ-  
կությունների հանգամանքը:

Անցումային շրջանի սկզբնական փուլում տարածված էր այն մտայնություն-  
նը (նաև արևմտյան խորհրդատուների թեթև ձեռքով, ինչո՞ւ չէ՝ նաև խորհրդային  
հասարակական մտքի թերացման պատճառով), թե շուկայական տնտեսությունը  
(հատկապես հյուսիսամերիկյան տարբերակը) մշակութային իմաստով «անտար-  
բեր» է, չեզոք, հետևաբար դրա իրականացումը մի շարք ըստ էության տեխնիկա-  
կան բնույթի քայլերի (օրինակ՝ գների ազատականացում, սեփականության ա-  
պաստանականացում, տնտեսության մեջ պետության ակտիվ դերի նվազում) ար-  
դյունք է: Սակայն բարեփոխումների առաջին իսկ քայլերից, երբ այդ երկրների  
տնտեսությունների մեծ մասը հայտնվեց տնտեսական խորը ճգնաժամի մեջ, իսկ  
ազգաբնակչությունը՝ սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակում, սկսեցին  
կարևորվել հիմնախնդրի այլ, մինչ այդ չլուսաբանված տեսանկյուններ:

Ի՞նչ է շուկայական տնտեսական համակարգը՝ որպես նյութական ռեսուրս-  
ների արտադրությանը, բաշխմանը, փոխանակմանն ու սպառմանն ուղղված հա-  
րաբերությունների կազմակերպման յուրահատուկ ձև: Արժեքային կողմնորոշում-  
ների ի՞նչ սկզբունքներ ու մեխանիզմներ է այն առաջարկում՝ կարգավորելու  
մարդու և հասարակության փոխհարաբերությունները:

Շուկայական տնտեսության գաղափարը շրջանառության մեջ դրվեց XVIII  
դարում՝ ազատական հայացքների ձևավորման և տարածման ժամանակաշրջա-  
նում, երբ հատկապես ֆրանսիական լուսավորականության գաղափարների ազ-  
դեցությամբ ձևավորվեց քաղաքացիական իրավունքներով ու պարտավորու-  
թյուններով օժտված անհատի գաղափարը: Ազատ շուկայի կամ շուկայական  
տնտեսության գաղափարի իրականացումը էապես փոխեց անհատ-հասարակու-  
թյուն-պետություն փոխհարաբերությունների համակարգի բնույթը: Միաժամա-  
նակ, հաշվի առնելով ժամանակաշրջանի ոգին, ինչպես նաև առաջավոր  
արևմտաեվրոպական երկրների տնտեսությունների առանձնահատկություննե-  
րը, XX դարում սոցիալ-քաղաքական ու հոգևոր իրադարձությունների ազդեցու-  
թյամբ տնտեսական ազատականության գաղափարները հետաքրքիր զարգա-  
ցում ապրեցին:

Ընդհանուր առմամբ ազատական տնտեսական համակարգը հենվում է  
հետևյալ սկզբունքների վրա.

• *նյութական բարիքները բաշխվում են ըստ համակարգի գործառության մեջ  
սուբյեկտի ունեցած տեղի ու դերի,*

• *երկրի մշակութային առանձնահատկություններին համապատասխան կա-  
ռավարում իրականացնում են ինչպես ոչ պետական, այնպես էլ պետական մար-  
միները: Ընդ որում, նախապես հաստատելով խաղի կանոնները, պետությունը  
այլևս չի միջամտում շուկայական գործընթացներին: Հետագայում հակամենա-  
շնորհային քաղաքականություն վարելու, տնտեսական ձեռնարկումներում հնա-  
րավոր ձախողումներից ապահովագրելու, ռիսկի գործոնը մեղմելու և երաշխիք-  
ներ տրամադրելու անհրաժեշտությունից ելնելով՝ պետությունը սկսում է ավելի  
ակտիվ դեր խաղալ շուկայում:*

Ինչպես ցանկացած, այնպես էլ շուկայական տնտեսության պարագայում  
ձևավորվել ու գործառում է տնտեսական որոշակի մշակույթ՝ արժեքային կողմն-  
որոշումների ու վարքի որոշակի համակարգով, որը, սակայն, շուկայական հարա-

բերությունների մասն այլընտրանքային է և կախված է տվյալ երկրի մշակութային առանձնահատկություններից: Այս տնտեսական մշակույթը ենթադրում է ձեռներեց, ակտիվ և ինքնակազմակերպման բարձր ունակությամբ օժտված անհատների առկայություն: Երաշխավորված քաղաքացիական իրավունքների ու ազատությունների շնորհիվ նրանք ազատ մրցակցության պայմաններում կարող են շուկայում տնտեսական գործունեություն իրականացնել: Ի տարբերություն պլանային տնտեսության՝ այստեղ անհատն ստիպված է դիմակայել արտաքին, մեծ մասամբ անկանխատեսելի հանգամանքներին: «Արտադրողականության մեծացման համար շուկայական տնտեսությունը մրցակցություն կիրառելու միջոցով ձգտում է եկամուտի: Եթե նույնիսկ սկզբնապես անհատին չի ուղղորդում եկամուտի և օգուտի մեծացման ձգտումը, հնարավոր է բարոյական նկատառումներով, մինչև նույն է, տնտեսական սնանկացման վտանգից խուսափելու համար նա հարկադրված է մրցակցել: Այդ իմաստով շուկայական տնտեսությունը ուժասպառ անող, հոգնեցնող համակարգ է, ուր ոչ ոք չի կարող կանգ առնել ձեռք բերված դիրքերում»<sup>3</sup>: Հետևաբար, եթե սոցիալական սուբյեկտը նպատակ ունի արդյունավետորեն գործել շուկայական տնտեսության մեջ, ապա պարտավոր է ղեկավարվել շուկայական տնտեսության օրինաչափություններով, առավել ևս տնտեսական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ազատություններով օժտված լինելու պարագայում: Ասվածից հետևում է, որ ազատական տնտեսական մշակույթի սահմաններում առաջնությունը այնուամենայնիվ պատկանում է անհատին, որի շահերն ու նպատակները ոչ միայն չպետք է ոտնահարվեն ընդհանուրի շահերի, նպատակների ու արժեքների կողմից, այլ նաև պաշտպանվեն: Այս հանգամանքը անհանգստանալու հիմքեր տվեց, քանի որ անձնական շահերով առաջնորդվող տնտեսական մարդը, կորցնելով սոցիալական կապերի հաստատման ավանդական ձևերը (կրոն, բարոյականություն) և չստեղծելով նորը, կարող է վերածվել ատոմիզացված սուբյեկտի, իսկ հասարակությունը կկորցնի իր ամբողջարկման ու միավորման հիմունքները: Համակարգային բնույթի մասն խնդրի լուծման ճանապարհին զարգացած շուկայական տնտեսություն ունեցող յուրաքանչյուր երկիր կիրառեց իր սեփական «դեղատոմսերը», թեև պետք է մշել, որ ժամանակակից արևմտյան հասարակությունների համար համայնքային կապերի թուլացումը և սրա հետևանքով առաջացած և աճող «սոցիալական հիվանդությունները» կարող են վտանգել նրանց գոյությունը:

Գրեթե յուրաքանչյուրին հնարավորություն տալով մասնակցել տնտեսական գործընթացների կառավարմանը՝ ազատական տնտեսական համակարգերը, ինչպես ցույց տվեց ժամանակը, օժտված են բարձր հարմարվողականությամբ ու ճկունությամբ: Այն, որ այս համակարգերը ժամանակին կարողացան լուրջ բարեփոխումներ իրականացնել՝ հաղթահարելով սոցիալական լարվածություններն ու խուսափելով աղետներից, վկայում է նրա արդյունավետության մասին: Սա թերևս պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այս կարգի համակարգերում սոցիալական լարվածություններն ու կոնֆլիկտները ընդունվում են որպես օրինաչափ երևույթներ, որոնք կարող են ուղղված լինել նաև համակարգի բարելավմանն ու կատարելագործմանը (առաջարկվող բարիքների որակի բարձրացում, տնտեսական սուբյեկտների միջև հարաբերությունների կարգավորում և այլն): Այդ իսկ պատճառով մշյալ համակարգերում տնտեսական կոնֆլիկտները, որպես կանոն, ռացիոնալացվում են, իմստիտուցիոնալացվում և օրինականացվում, առավել ևս, որ այսպիսի համակարգերում կան կոնֆլիկտների կարգավորման և՛ տնտեսական, և՛ իրավաքաղաքական, և՛ սոցիոմշակութային բավարար հիմունքներ:

<sup>3</sup> К. Хоман, Ф. Бломе-Дроз. Экономическая и предпринимательская этика. М., 2001, с. 193.

Արմատական բարեփոխումներ իրականացնելու նպատակով փոխակերպական գործընթացներում հայտնված հասարակական համակարգերը, ի սկզբանե չնախատեսելով իրադարձությունների նման ընթացք, առաջին իսկ տնտեսական քայլերից խուճապահար ու կաթվածահար եղանակով դրսևորելով համակարգային անորոշության և անկայունության «սխտանիշեր»։ Այդ կարգի տնտեսական համակարգերում նկատվեցին մի շարք գործընթացներ, որոնք իրենց հերթին դարձան տնտեսական կոնֆլիկտների սոցիոմշակութային շարժառիթներ։

**Առաջին՝** խախտվեց աշխատանքի հասարակական բաժանման նախորդ համակարգի համամասնությունը և տնտեսական ազատականացման առաջին իսկ քայլերը այդ համակարգը դարձրին ապարդյունաբերական։

**Երկրորդ՝** տնտեսական բարեփոխումները առաջադրեցին մասնագիտությունների վերաորակավորման խնդիրներ, որոնք, չունենալով լուծման անհրաժեշտ նախադրյալներ, նպաստեցին ապամասնագիտացմանն ու տնտեսական առանձին ոլորտների գործառական կախվածության թուլացմանը։

**Երրորդ՝** տնտեսական հարաբերությունների վերակառուցման, ինչպես նաև ավանդական կապերի խզման ու արտադրության որոշ ճյուղերի շահութաբերության անկման հետևանքով տնտեսական մի շարք ճյուղերում գերիշխող դարձավ պարզագույն տեխնոլոգիաների կիրառումը։

**Չորրորդ՝** անհրաժեշտ իրավաքաղաքական ու սոցիոմշակութային ավանդույթների բացակայության պատճառով շուկայական հարաբերությունները, մրցակցությունն ու ձեռներեցությունը հայտնվեցին աննպաստ պայմաններում։

Աշխատանքի որպես սոցիալական օրգանիզմի ամբողջարկման և միավորման միջոցի հասարակական բաժանման գաղափարը պատկանում է ֆրանսիացի սոցիոլոգ-տեսաբան Էմիլ Դյուրկհայմին, որը պնդում էր, որ այն զուտ տնտեսական երևույթ չէ<sup>4</sup>։ Աշխատանքն ունի նաև սոցիոմշակութային նշանակություն, քանզի հասարակական կարգի, համերաշխության ու ներդաշնակության աղբյուրներից մեկն է։ Փոխակերպվող հասարակություններում առաջին հայացքից զուտ տնտեսական այս իրողությունները հանգեցրին մի կողմից՝ սոցիալական մի շարք կապերի ու հետևաբար հասարակության ամբողջարկման և միավորման սոցիոմշակութային հիմունքների քայքայմանը, մյուս կողմից՝ մարդկանց զրկեցին տնտեսական հարաբերություններում ներառվելու այն հնարավորությունից, որ ընձեռում էր պլանային տնտեսահամակարգը։ Այս իմաստով փոխակերպվող հասարակություններում տնտեսական համակարգին բնորոշ են մի շարք առանձնահատկություններ.

- ♦ *թեև սեփականությունը հիմնականում մասնավոր է, այնուամենայնիվ նրա պահպանման ու անձեռնմխելիության համար իրական երաշխիքներ չկան, ինչը դժվարացնում ու ռիսկային է դարձնում տնտեսական գործունեությունը,*

- ♦ *շուկայական հարաբերությունները ազատ մրցակցության համար դեռևս չունեն գործառող մեխանիզմներ,*

- ♦ *տնտեսական ու քաղաքական իշխանությունների տարանջատվածությունը, ինչը բնորոշ է տնտեսական ազատականությանը, պարբերաբար խախտվում է։ Դրանք, որպես կանոն, սերտանում են։*

Համակարգային այս իրողություններն անխուսափելիորեն ուղեկցվում են տնտեսական կոնֆլիկտներով, որոնք արտադրության, բաշխման, փոխանակման ու սպառման ոլորտներում ունեն ոչ միայն նյութական, այլև սոցիոմշակութային շարժառիթներ։ Դրանք ծավալվում են տնտեսական գործունեության բոլոր

<sup>4</sup> Ст'ю Эмиль Дюркгейм, О разделении общественного труда. Метод социологии, М., 1991, էջ 58-63:

մակարդակներում ու ձևերում՝ հաճախ (կամա թե ակամա) բեզդրկելով ամենատարբեր սոցիալական սուբյեկտների ինչպես բուն տնտեսական, այնպես էլ հարակից ոլորտները: Նման չտարրորշվածությունը, որ անթույլատրելի է կայացած ու կայուն հասարակական, հետևաբար տնտեսական համակարգերի համար, ավելի ուժգին ու հաճախական է դարձնում տնտեսական կոնֆլիկտները: Այդ պատճառով վերջիններս ավելի հաճախ շաղկապված են և դրսևորվում են բնութթով գուցե տարբեր, բայց դրանց հետ սերտորեն առնչվող այլ կոնֆլիկտների հետ, օրինակ՝ աշխատանքային և սոցիալ-տնտեսական:

Աշխատանքային կոնֆլիկտները ծագում են «գործատու-վարձու աշխատող» հարաբերությունների համակարգում՝ վարձակալման, աշխատանքի ու կենցաղային հարցերի կապակցությամբ, և կարող են դրսևորվել աշխատանքային վեճերի, գործադուլների և այլ ձևերով: Փոխակերպվող հասարակություններում այս կարգի կոնֆլիկտները, բացի ներիրադրային պատճառներից, շատ հաճախ ունեն կոնկրետ տնտեսական հարաբերությունների շրջանակից դուրս գտնվող շարժառիթներ: Այսինքն՝ աշխատանքային կոնֆլիկտները, որոնք կարող են առաջ գալ, օրինակ, աշխատավարձի նվազ լինելու կամ ժամանակին չտրվելու, աշխատանքային պայմանների վատթարության, վճարվող արձակուրդ չունենալու, չնորմավորված աշխատանքային ժամի և այլ կոնկրետ պատճառներով, փոխակերպվող հասարակություններում պայմանավորված են արտաիրավիճակային գործոններով: Վերջինս նկատելի դարձավ հատկապես այն ժամանակ, երբ նախկին արդյունաբերական հսկաները մասամբ կամ լիովին դադարեցրին իրենց գործունեությունը, և հասարակության աշխատունակ զանգվածի մի մասը հայտնվեց կիսագործուն ու կիսազբաղված վիճակում, իսկ մյուս մասը տեղափոխվեց աշխատանքային զբաղվածության մասնավոր ոլորտ: Հասարակական մակարդակում միասնական արժեքային կողմնորոշիչների փոշիացման, իրավանորմատիվային դաշտի չկայացվածության պարագայում աշխատանքային հարաբերությունները, այդ թվում նաև սոցիալական փոխազդեցությունների այնպիսի ձևեր, ինչպիսիք կոնֆլիկտներն են, սկսեցին ձեռք բերել ձևավորման ու կարգավորման ինքնատիպ մեխանիզմներ ու հիմքեր, որոնք հաճախ գտնվում են սոցիոմշակութային օրինականության սահմաններից դուրս:

Պետք է նշել, որ փոխակերպումների հետևանքով տնտեսական գործունեության նոր ձևերի «հաղթահարչավը», ինչպես ցույց տվեց ժամանակը, արգելակվեց այն պատճառով, որ չձևավորվեցին՝

*ա. տնտեսական, քաղաքական և իրավական համարժեք հիմնարկներ,*

*բ. նոր տնտեսական իրողություններին համարժեք տնտեսվարող սուբյեկտների անձնային որակներ:*

Ինչ խոսք, այս գործոնները միմյանց հետ սերտորեն փոխկապակցված են, քանի որ մի կողմից՝ անձի մակարդակում անհատականացվում և իրացվում են հասարակակնորեն ընդունված ու արժևորված իրողությունները, մյուս կողմից՝ վերջիններս ձևավորվում և կայանում են միայն անձնայինի տիպականացման շնորհիվ: Դրանք որևէ ընդհանուր բան չպետք է ունենան վարչական կամայականության, աշխատողների տարրական իրավունքների ոտնահարման կամ չիմացության հետ: Այնուամենայնիվ վերոհիշյալ գործոնները հնարավոր դարձրին աշխատանքային կոնֆլիկտների ու նրանց լուծման ինքնատիպ միջոցների գործարկումը փոխակերպվող հասարակություններում: Բանն այն է, որ տնտեսավարման վարչահրամայական եղանակը հովանավորչական էր և սոցիալական փոխազդեցություններին հաղորդում էր ուղղահայաց բնույթ, ուր կողմերից մեկը ուներ գերակա կարգավիճակ, հեղինակություն ու ռեսուրսներ: Նրանց միջև հարաբերությունները, որպես կանոն, դուրս էին գալիս ձևական, այսինքն՝ իրավական-օրինական կարգավորման ոլորտից: Այդ պատճառով նման տնտեսահամա-

կարգում ձևավորվում էին տնտեսական հարաբերությունների կարգավորման ոչ ձևական նորմեր ու մեխանիզմներ, որոնք իրենց հերթին ենթարկվում էին համապատասխան ինստիտուցիոնալացման, ստանում կարգավորված ու կազմակերպված բնույթ, ենթարկվում սոցիոմշակութային օրինականացման՝ դրանով իսկ սողանքներ բացելով ստվերային տնտեսության համար:

Ի տարբերություն վերջինի՝ տնտեսական ազատականությունը հիմնվում է համազործակցության սկզբունքի վրա, երբ կողմերի միջև սոցիալական փոխազդեցությունների բնույթը առավելապես հորիզոնական է, իրավահավասար և տրնտեսական հարաբերությունները, այդ թվում նաև աշխատանքային կոնֆլիկտները, կարգավորվում են սոցիոմշակութային օրինականացում ստացած, այսինքն՝ ներանձնավորված, լուրացված և վարքով իրացվող իրավական նորմերի շրջանակում: Տնտեսական ոլորտում հիմնային և արմատական փոխակերպումների հետևանքով ծավալված այդ կոնֆլիկտները ըստ էության պարադոքսալ իրավիճակի արդյունք են. ժամանակի պահանջները շուկայական են, բայց ոչ խաղի կանոններն են հստակ ու որոշակի, ոչ էլ վարքանմուշային դրսևորումներն են փոխվել ու համապատասխանեցվել նոր պահանջներին: Այսինքն՝ աշխատանքային կոնֆլիկտները նախ և առաջ ազատական տնտեսության պահանջներին կողմերի անպատրաստվածության, հետևաբար նման բնույթի տնտեսական գործունեության մեջ ներառվելու իրական արգելքների հետևանք են: Դրանք բացահայտում են այն խորը հակասությունը, որ գոյություն ունի իրավական նորմերի և նրանց սոցիոմշակութային օրինականացման միջև: Այդ հակասությունն ավելի ուշ վերածում է իրավական նորմերի և կիրարկվող սոցիոմշակութային նորմերի միջև կոնֆլիկտի: Ընդ որում, փոխակերպումների տարբեր փուլերում նրանց միջև իրական անջրպետներն ու կոնֆլիկտները դրսևորվում են որոշակի առանձնահատկություններով: Սկզբնական շրջանում ազատական տնտեսական իրողությունները ծավալվում են իրավական ու սոցիոմշակութային անհամարժեքության, անհամատեղելիության պայմաններում, ինչը շատ շուտով դրսևորվեց տրնտեսական «սայթաքումների» ձևով: Հաջորդ փուլում միջազգային գործընթացները ստիպեցին վերափոխել իրավական ոլորտը՝ անցանկալի ու արգելափակիչ հետևանքներից խուսափելու համար: Սակայն, պարզվեց, որ իրավաստեղծ գործունեությունը ոչ միայն դեռ լրիվ չի կայացել, այլև առաջ են եկել իրավական նորմերի սոցիոմշակութային օրինականության ավելի խորն ու հիմնային խնդիրներ: Այս ամենի հետևանքով տնտեսական հարաբերությունների ոլորտում ծավալվող գործընթացները, որոնց իրավական կարգավորմանը կողմերը պատրաստ չէին, սկսեցին կարգավորվել ոչ ձևական մեխանիզմներով ու միջոցներով (ծանոթ, բարեկամ, ընկերական կապեր, նվերներ, ուժ, հարկադրանք): Պատահական չէ, որ հետխորհրդային երկրների տնտեսությունների արդյունավետության համար իրական խնդիր է դարձել ոչ ձևական, օրինականության սահմաններից դուրս գտնվող տնտեսական գործունեության ձևերի, հարաբերությունների կարգավորման մեխանիզմների ինստիտուցիոնալացումը:

Հարկ է նկատել, որ շուկայական տնտեսությունը չափազանց հոգնեցուցիչ ու հալոմաշ անող համակարգ է, որն անընդհատ անհատների առջև դնում է հարմարվելու՝ տարածաշրջանային, մասնագիտական, արտադրողական, հոգևոր-հուզական և այլ կարգի ճկունության պահանջներ: Արդյո՞ք դրան պատրաստ էին հետխորհրդային հասարակությունների քաղաքացիները: Պատասխանը բացասական է. ապացույցը պարբերաբար կրկնվող տնտեսական կոնֆլիկտներն ու հակասություններն են: «Իհտարկումները ցույց են տալիս, որ գործունեությունը կարող է ունենալ կազմակերպման տարբեր մակարդակներ՝ կախված այն բանից,

<sup>5</sup> Տե՛ս Կ. Խոան, Փ. Բլոմե-Բրոս, նշվ., աշխ., էջ 242:



թե ինչպես է այն պլանավորված, կամ ինչպիսին է գործունեության համակարգի ու ճոճմանու ալ կերպարների հարաբերակցությունը: ...Առավելագույն պարզագույն մակարդակը աշխատանքն է ըստ «կողմնորոշումների»<sup>6</sup>: Այս դեպքում, ինչպես նկատում է Բ. Ա. Դուշկովը, գործունեությունը կառուցվում է առաջացող ազդանշաններից պատասխանելու սկզբունքով՝ կարծես ամբողջովին կախված լինելով արտաքին իրադարձությունների ընթացքից: Եթե մարդը գործում է ըստ «կողմնորոշումների», նշանակում է չունի գործունեության մասնապես մտածված և հստակ ծրագիր: Գործունեության այս տեսակը ավելի շատ վարքի դրսևորում է: Այն դեպքում, երբ պատասխան գործողություն պահանջող ազդանշանները պատահական բնույթի են և հաճախադեպ, գործունեությունը դառնում է չափազանց լարված, երբեմն նույնիսկ՝ քառասյին: Գործունեության ավելի բարձր մակարդակը ըստ մտուշի կամ շարժումի աշխատանքն է, որի դեպքում մարդն ունի հստակ, բայց նախասահմանված ծրագիր և ձգտում է գործել նախապես սահմանված կարգով: Դա գործունեությանը տալիս է առավել բարձր արդյունավետություն և որակ, քան աշխատանքը ըստ «կողմնորոշումների»: Սակայն դժվար պայմանները, անսպասելի իրադարձությունները կարող են ապակազմակերպել ստանդարտ գործունեությունը: Առավել բարձր մակարդակը ըստ իրադարձությունների հնարավոր փոփոխության գործունեության պլանավորումն է: Այս դեպքում մարդը առանց մանրամասնելու ուրվագծում է գործունեության ընդհանուր ռազմավարությունը, ինչը հնարավորություն է տալիս, կախված կոնկրետ պայմաններից, փոխել գործողությունների բնույթն ու հերթականությունը: Գործունեության պլանավորումը որոշ դեպքերում ենթադրում է փոփոխություն նաև արտաքին միջավայրում<sup>7</sup>: Գործունեության սոցիալ-հոգեբանական այս բնութագրության մեջ հստակորեն կարելի է տարանջատել փոխակերպվող, վարչահրամայական և ազատական տնտեսական համակարգերում անհատի կենսագործունեության վարքանմուշային տարատեսակները: Իսկապես, փոխակերպվող հասարակություններում անհատի, սոցիալական սուբյեկտների վարքագիծը նման է անձանոթ տեղանքում չկողմնորոշվող, բայց կենսական խնդիրների լուծման առջև կանգնած մարդու վարքագծին: Ինչպես նկատում է ամերիկացի տեսաբան Ֆ. Ֆրեյդլանդը, «Նախկին կոմունիստական հասարակությունների փորձառությունն այն էր, որ կոմունիզմը ստեղծել էր բազմաթիվ սովորույթներ՝ չափազանց կախվածություն պետությունից, ինչի հետևանքով բացակայում էր ձեռնարկատիրական էներգիան, փոխզիջելու անկարողություն ու կամավոր համագործակցելու չկամություն այնպիսի խմբերում, ինչպիսիք են ձեռնարկությունները կամ քաղաքական կուսակցությունները: Հանգամանքներ, որոնք խոչընդոտում էին ժողովրդավարության և շուկայական տնտեսության կայացմանը: Այդ հասարակություններում մարդիկ կարող էին համաձայնել կոմունիզմը ժողովրդավարությանը ու կապիտալիզմով փոխարինելուն, «ժողովրդավարական» բարեփոխումներին, սակայն անհրաժեշտ այլ աշխատանք անելու համար նրանք չունեին սոցիալական սովորույթներ»<sup>8</sup>:

Տնտեսական կոնֆլիկտների համատեքստում սոցիալ-տնտեսական կոնֆլիկտները սահմանվում են որպես տարբեր շերտերի միջև նյութական և կենսաապահովման միջոցների նկատմամբ ունեցած իրական հնարավորության ու մատչելիության բախումներ<sup>9</sup>: Ծագելով որպես սոցիալական բարիքների անհավասարաչափ բաշխման հետևանք՝ փոխակերպվող կոնֆլիկտները հասարակություններում

<sup>6</sup> Բ. Ա. Դուշկով. Психология менталитета и нооменталитета. Екатеринбург, 2002, с. 192.

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>8</sup> Francis Fukuyama. Trust: social virtues and the creation of prosperity. New York, 1995, p. 40.

<sup>9</sup> Տե՛ս Օ. Ա. Алексеев, նշվ. աշխ., էջ 276:

ունեն ոչ այնքան նյութական, որքան արժեքային երանգավորում և կապված են այդ սուբյեկտների կողմից սոցիալական արդարության զաղափարի ըմբռնման ու իմաստավորման հետ: Մի կողմից՝ սոցիոմշակութային փոխակերպումների հետևանքով տնտեսական-արժեքային կողմնորոշումների փոփոխությունները (սոցիալական արդարության, տնտեսական ռացիոնալության նոր մեկնաբանություններ), մյուս կողմից՝ նախկին սոցիոմշակութային, սեմանտիկական դաշտի սահմաններում արդարության ձգտումներով, սոցիալական սուբյեկտները նախադրյալներ են ստեղծում նշյալ կոնֆլիկտների ծավալման համար: Քանի որ սոցիալ-տնտեսական կոնֆլիկտների առաջացումն ու ծավալումը շատ հաճախ պայմանավորված են պետական-քաղաքական կառույցների գործունեությամբ, իսկ փոխակերպվող հասարակությունների առանձնահատկություններից մեկը հենց տնտեսական և քաղաքական իշխանությունների միջև ինքնատիպ հարաբերությունների գոյությունն է, ապա անհնար է անտեսել դրանց նշանակությունը ոչ միայն տնտեսական կոնֆլիկտներում, այլև փոխակերպումներում ընդհանրապես:

Ինչպես արդեն նշվել է, ազատական տնտեսական համակարգի առանձնահատկություններից մեկը տնտեսական և քաղաքական իշխանությունների հստակ տարանջատումն է, որը թույլ է տալիս հասարակության համար կարևոր ռեսուրսների (նյութական, վարչական, հարկադիր ուժի) բաշխման շնորհիվ փոխադարձ վերահսկողություն սահմանել միմյանց վրա՝ նպաստելով համակարգի օպտիմալ գործառությանը: Իշխանության այդ ձևերի միջև էական ռեսուրսների վերահսկողության ու բաշխման հավասարակշռության շնորհիվ հնարավոր դարձավ տարանջատել անհատի իրավական-քաղաքական կարգավիճակը հասարակության մեջ ունեցած սոցիալ-տնտեսական դերից, ապահովել նրա հիմնական ազատությունները, այդ թվում նաև մասնավոր սեփականության իրավունքը՝ պահպանելով այն քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունների հետևանքներից և պետության ռոնձգություններից<sup>10</sup>:

Նույնը չի կարելի ասել վարչահրամայական տնտեսահամակարգի վերաբերյալ, որտեղ պետության ձեռքում բոլոր լծակների կենտրոնացման, հետևաբար նաև տնտեսական և քաղաքական իշխանությունների համատեղման պատճառով ձևախեղվեցին իշխանության ի բնե տարբեր ձևերը: Նյութական ռեսուրսների նկատմամբ վերահսկողություն սահմանելու հետևանքով նաև քաղաքական իշխանությունն ամենազոր էր դարձել, մենիշխան ու բացարձակ՝ դուրս մնալով որևէ հսկողությունից ու վերահսկողությունից:

Ինչ վերաբերում է փոխակերպվող հասարակությանը, ապա տնտեսական ու քաղաքական իշխանությունների հարաբերակցությունը շատ հաճախ նմանվում է վարչահրամայական տնտեսահամակարգին, թեև տնտեսական իրողությունների համատեքստում այն ձեռք է բերել որոշ առանձնահատկություններ: Փոխակերպվող հասարակություններում տնտեսական և քաղաքական իշխանությունների դասական տարանջատվածությունը դառնում է գրեթե անհնար: Այս առնչությամբ Գ. Ա. Պողոսյանը իրավացիորեն նկատում է, որ անցումային հասարակություններում տնտեսական փոխակերպումները դեռևս չեն ավարտվել, չի իրականացվել պետական կարգավորումից շուկայականի անցումը, քանի որ պետությունը թեև հեռացել է տնտեսությունից, սակայն պահպանում է բարեփոխումների ընթացքի և բնույթի վրա ազդելու դերն ու միջամտելու հնարավորությունը: Հայաստանում ստեղծվել է «բարեփոխված սոցիալիստական տնտեսության» խառը, հիբրիդային տարբերակ, որտեղ կարգավորման շուկայական մեխանիզմների հետ գոյություն ունեն պետական, ինչպես նաև ոչ պակաս ուժեղ կլանային կարգավորիչներ:

<sup>10</sup> Տե՛ս «Политическая социология», Ростов-на-Дону, 2001, էջ 142:

հասարակությունը նվազագույն չափով է մասնակցում տնտեսական գործընթացներին, իշխանությունն ու բիզնեսը ընդհանուր շահեր են գտել, թեև նախկինի պես պահպանվել է ներկլանային և միջկլանային պայքարը<sup>11</sup>: Այս պարագայում տրնտեսական կոնֆլիկտներ ծավալվում են նաև իշխանությունը կրողների միջև, եթե ոչ անմիջականորեն, ապա միջնորդավորված: «Համեղ պատառի» համար մղվող պայքարում բախվում են անհատական ու խմբային շահեր՝ կիրառելով վարչական, ուժային, տեղեկատվական և այլ միջոցներ: Ընդ որում, քաղաքական իշխանության մեջ ուժերի հարաբերակցության յուրաքանչյուր փոփոխությունն նոր լիցք է հաղորդում տնտեսական կոնֆլիկտների ուժգնությանը՝ դրանք դարձնելով համակարգի շարունակական բնութագրություն: Եթե ազատական ու կայուն հասարակություններում նմանօրինակ կոնֆլիկտները նպաստում են համակարգի կատարելագործմանը, ապա փոխակերպվողներում դրանք միայն դանդաղեցնում և անարդյունավետ են դարձնում սոցիոմշակութային բարեփոխումները: Փաստորեն տնտեսական ու քաղաքական գործունեության մեջ անմիջականորեն ներառվածները հեռու են ազատականության հիմնարար գաղափարների իրականացումից, և սոցիոմշակութային ռեալության մեջ դեռևս գործառում է քաղաքական իշխանության շնորհիվ տնտեսական իշխանության և տնտեսական իշխանության շնորհիվ քաղաքական իշխանության գալու վարքանմուշային նորմը:

Փոխակերպվող հասարակություններում սոցիոմշակութային շարժառիթներով են պայմանավորված նաև տնտեսական ոլորտում անձնական և հասարակական շահերի միջև ծագող հակասություններն ու բախումները, որոնք հաճախ վերաճում են բարոյականության ու տնտեսական արդյունավետության միջև հակասությունների: Այս հանգամանքը ակնհայտորեն դրսևորվեց ինչպես տնտեսական ազատականացման և հատկապես սեփականաշնորհման գործընթացներում, այնպես էլ տնտեսական գործունեության այլ ձևերի իրականացման ժամանակ: Այն, որ փոխակերպվող հասարակությունների բոլոր ենթամակարդակներում անձնական, խմբային և հասարակական շահերի միջև բախումը, ինչպես նաև անձնականի ընդգծված գերակայությունը նկատելի է ու ապագործառնական նշանակություն ունի, բոլոր նման հասարակությունների խնդիրն է: Սակայն, որպես կանոն, յուրաքանչյուր կայուն հասարակական համակարգի շրջանակներում առկա են այդ շահերի ներդաշնակեցման սեփական ձևեր ու հիմունքներ: Մարդկությունն առհասարակ փորձում է կատարելագործել այդօրինակ շահերի միջև հարաբերությունների կարգավորման մեխանիզմները: Փոխակերպվող հասարակությունների խնդիրն առավել քան լուրջ է, քանզի անձնային, խմբային և հասարակական շահերի միջև բախումները խոչընդոտում են բուն համակարգի կայունացմանը և համապատասխան չափորոշիչների կայացմանը:

Այսպիսով, հետխորհրդային երկրներում սոցիոմշակութային զուգահեռականության ու սոցիոմշակութային դաշտի անորոշության և նրանց ինստիտուցիոնալ կազմակերպման բացակայության պատճառով հատկապես տնտեսական ոլորտում կոնֆլիկտները դառնում են անխուսափելի: Արժեքային ընդհանրական «զսպաշապիկներ» բացակայությունը, սեփական տնտեսական շահերով առաջնորդվող եսասեր մարդու երևան գալը, ինչպես նաև այսպես կոչված ազատական իրողություններում «չկողմնորոշվող» մեծ թվով անհատների առկայությունը նպաստում են դրանց հետագա լինելիությանը: Այդ իսկ պատճառով դրանց հաղթահարումը դառնում է համակարգի կենսական խնդիրներից մեկը: Հակառակ դեպքում վտանգվում է նրա գոյության ու զարգացման հեռանկարը:

Փոխակերպվող հասարակություններում սոցիոմշակութային շարժառիթներով պայմանավորված տնտեսական կոնֆլիկտների հաղթահարումը հնարավոր

<sup>11</sup> Տե՛ս Գ. А. Погосян, Армянское общество в трансформации, Ер., 2003, էջ 147-148:

է միայն հասարակական լայն շերտերի, պետական-քաղաքական կառույցների, ընդհանրապես սոցիալական ուժերի փոխադարձ համագործակցության շնորհիվ, երբ հասարակական երկխոսությունը հնարավորություն կընձեռի նրանցից յուրաքանչյուրին մասնակցելու սոցիոմշակութային օրինականության սահմաններում տնտեսական կյանքի կազմակերպման ընդհանրական «ծրագրի», մոդելի ստեղծմանը, մշակմանն ու իրացմանը:

**Н. Ж. МКРТЧЯН - К вопросу о социокультурных причинах экономических конфликтов в трансформационных обществах.** - В статье наряду с другими факторами рассматривается роль социокультурных причин в становлении и развертывании экономических конфликтов в условиях трансформационных обществ. Вследствие смены одной экономической системы - с определенными культурными принципами конструирования и организации экономической сферы общественной системы - другой, экономические конфликты, которые развертываются по поводу производства, распределения, обмена и потребления материальных ресурсов, обретают некоторые особенности. В статье отстаивается точка зрения, согласно которой социальные субъекты в большинстве своем не могут полноценно вовлекаться в новые экономические отношения и действовать согласно поведенческим образцам и ценностям новых экономических реалий, поскольку являются носителями ценностей, поведенческих образцов другой экономической системы. Это и является одной из причин экономических конфликтов в трансформационных обществах.